



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌՇՆԹԵՐ  
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ  
(AMICUS CURIAE) № 05/22**

30.03.2022թ.

ք. Երևան

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի և Բարձրագույն դատական խորհրդի «Դատավորների միջև գործերի հավասարաչափ բաշխման չափանիշները և կարգը. գործերի վերաբաշխման, կոլեգիալ դատական կազմերը ձևավորելու կարգը և դատավորներին հանձնվող գործերի տոկոսաչափեր սահմանելու մասին» թիվ ԲԴԽ-16-Ն-6 որոշման 4-րդ կետի և դրա Հավելված 1-ի 19-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 41-րդ հոդվածի 4-րդ մասի և Բարձրագույն դատական խորհրդի «Դատավորների միջև գործերի հավասարաչափ բաշխման չափանիշները և կարգը. գործերի վերաբաշխման, կոլեգիալ դատական կազմերը ձևավորելու կարգը և դատավորներին հանձնվող գործերի տոկոսաչափեր սահմանելու մասին» թիվ ԲԴԽ-16-Ն-6 որոշման 4-րդ կետի և դրա Հավելված 1-ի 19-րդ կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին, 78-րդ, 79-րդ և 81-րդ հոդվածներին այնքանով, որքանով վիճարկվող դրույթների իրավական որոշակիության բացակայությունը վտանգում է անձի արդար դատաքննության իրավունքը և կարող է հանգեցնել այդ իրավունքի անհամաչափ սահմանափակման:

Սույն դիմումում բարձրացված խնդիրն այն է, որ դատական գործերի բաշխման ավտոմատացված համակարգը, որն ուղղված է հայեցողականությունն ու կամայականությունը բացառելուն և յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքը երաշխավորելուն, այլևս չի գործարկվում և նման պայմաններում այն իրականացվում է դատարանների նախագահների կողմից՝ առանց չափանիշների ու միասնական ամրագրված մոտեցումների, իսկ Դատական օրենսգիրքը չի նախատեսում կարգավորումներ նման դեպքերի համար: Արդյունքում՝ ստեղծված իրավիճակը հանգեցնում է խնդիրներ մարդու իրավունքների սահմանադրական իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Այսպես, ներկայում դատավորների միջև գործերի բաշխումն իրականացվում է ոչ թե Օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հատուկ համակարգչային ծրագրի միջոցով, այլ դա անում են առանձին դատարանների նախագահներ: Նշվածի

կապակցությամբ ԲԴԽ-ն մարդու իրավունքների պաշտպանի հարցմանը, որպես պաշտոնական պատճառ, նշել է դատական գործերի բաշխումը հատուկ համակարգչային ծրագրով իրականացնելու անհնարինությունը:

Նշվածն էլ, ըստ ԲԴԽ-ի, իր հերթին, պայմանավորված է նրանով, որ հարուցված քրեական գործի շրջանակներում նշված համակարգչային ծրագրի սերվերի մուտքի և կառավարման բանալիները առգրավված են, և այդ փաստով էլ առաջացել է անհաղթահարելի ուժ:

Այսինքն՝ ստացվում է, որ քրեական հետապնդման մարմնի որոշմամբ, կամ որ նույնն է՝ միջամտությամբ, կարող է խաթարվել երկրի արդարադատության ողջ համակարգում գործերի բաշխման համակարգչային ծրագիրը, և ավելին՝ այն կարող է դիտարկվել՝ որպես անհաղթահարելի ուժ: Սա քրեական հետապնդման մարմնի բացահայտ միջամտությունն է դատարանների ու դատավորների անկախության ու անաչառության սահմանադրական և միջազգային պահանջներին:

Դատարանների նախագահների կողմից դատական գործերի բաշխման չափանիշները բացակայում են: Չկան հստակություն ապահովող լուծումներ կամ դրույթներն անորոշ են: Այս ամենն էլ հանգեցրել է ոչ միասնական, անորոշ մոտեցումների գործնականում կիրառելիության կամ գործնական մեկնաբանության հարցերում: Օրինակ՝ Երևանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և Վերաքննիչ քրեական դատարանի կողմից նշվում է, որ դատական գործերը բաշխելիս հաշվի է առնվում դատավորների ծանրաբեռնվածությունը՝ առանց որոշակիացնելու այն ամրագրող օրենսդրական հիմքը:

Այս անորոշ վիճակը, դատարանների նախագահների կողմից գործերը բաշխելիս միասնական մոտեցումների բացակայությունը բացահայտ խոցելի է դարձնում դատավորներին ու դատարաններին՝ կապված արտաքին կամ ներքին միջամտությունների հետ: Սա էլ իր հերթին լուռ վտանգներ է պարունակում մարդու իրավունքների տեսանկյունից:

Այս ամենն արտահայտված է նաև ԲԴԽ-ին ուղղված մի շարք դատավորների հրապարակային մտահոգություններում:

Դատական գործերի մակագրության գործող ընթացակարգի վերաբերյալ մտահոգություններ են ներկայացրել նաև առանձին դատավորներ՝ Մարդու իրավունքների պաշտպանին նեկայացված անանուն հարցումներով:

Ըստ նրանց՝ մակագրությունների համակարգչային համակարգը «ձեռքով մակագրություններին» եղանակով փոխարինելու արդյունքում տևական ժամանակ է, ինչ որոշ դատավորներ այլևս չեն քննում որոշակի կատեգորիայի գործեր (օրինակ՝ գործեր, որոնք բարդ են, ունեն զգայունություն, ներկայացնում են հանրային հետաքրքրություն)՝ այսպիսիք այդ դատավորներին չմակագրելու աղբյուրն է: Ավելին, ըստ մի շարք դատավորների տեղեկությունների՝ դատարանների նախագահների կողմից մակագրության առկա համակարգը հանգեցրել է նրան, որ գործերի մակագրության վրա ազդում է նաև դատարանների նախագահների անձնական վերաբերմունքը դատավորների նկատմամբ: Դրանով էլ դատավորները կախվածության մեջ են ընկնում

դատարանների նախագահներից: Արդյունքում՝ ստեղծվել է իրավիճակ, որ կան, այսպես կոչված, «դատական մեկուսացման» մեջ հայտնված դատավորներ:

Ստացվում է, որ ամիսների կտրվածքով խնդրի տևականությունը նաև որոշակի օրինաչափություն է ձևավորում կոնկրետ գործերը դատավորներին մակագրելու (չմակագրելու) և մեկուսացնելու, դատավորներին կախվածության մեջ քցելու առումով:

Ստեղծված իրավիճակը, եթե անգամ վերացարկվեն կոնկրետ առանձին գործերով առանձին դատավորների անկախության սուբյեկտիվ և օբյեկտիվ չափանիշների դիտարկումից, արդեն իսկ անվստահության ընդհանուր մթնոլորտ է ձևավորվում այդ մակագրությունների ընթացակարգի և հետևաբար ողջ դատական համակարգի նկատմամբ:

Որոշ դատավորներ անանուն հարցումներով նշել են, որ իրենք գիտեն իրավիճակներ, երբ կոնկրետ գործերի մակագրության համար անգամ դատավորներ են հետ կանչվել արձակուրդից՝ «ձեռքով» մակագրություն իրականացնելու համար:

Ավելին, դատավորների այս մտահոգությունը կիսում են նաև կոնկրետ գործերով անձին իրավաբանական օգնության իրավունքն ապահովող փաստաբանները, քրեական գործերով պաշտպանները և Փաստաբանների պալատը:

Ասվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ տևական ժամական ստեղծվել է իրավիճակ, երբ գործերի մակագրության ընդհանուր կանոնը՝ համակարգչային եղանակով մակագրությունը չի գործում, իսկ իբրև բացառություն ամրագրված՝ դատարանների նախագահների կողմից «ձեռքով» մակագրությունների ընթացակարգը բացառությունից վերածվել է կանոնի ու հայտնի էլ չէ, թե որքան կտևի:

## ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 41-րդ հոդվածի 4-րդ մասի և Բարձրագույն դատական խորհրդի «Դատավորների միջև գործերի հավասարաչափ բաշխման չափանիշները և կարգը. գործերի վերաբաշխման, կոլեգիալ դատական կազմերը ձևավորելու կարգը և դատավորներին հանձնվող գործերի տոկոսաչափեր սահմանելու մասին» թիվ ԲԴԽ-16-Ն-6 որոշման (այսուհետ՝ Որոշում) 4-րդ կետի և դրա Հավելված 1-ի 19-րդ կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին, 78-րդ, 79-րդ և 81-րդ հոդվածներին այնքանով, որքանով վիճարկվող դրույթների իրավական որոշակիության բացակայությունը վտանգում է անձի արդար դատաքննության իրավունքը և կարող է հանգեցնել այդ իրավունքի անհամաչափ սահմանափակման:

Վիճարկվող դրույթների բովանդակությունը հետևյալն է.

Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

*4. Եթե անհատթահարելի ուժի հետևանքով գործերի բաշխումը հնարավոր չէ իրականացնել Համակարգչային ծրագրի միջոցով, ապա գործերը՝ ըստ դատավորների ազգանունների այբբենական հերթականության, հաշվի առնելով սույն օրենսգրքի 42-րդ*

հողվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված առանձնահատկությունները, դատավորների միջև հավասարաչափ բաշխում է դատարանի նախագահը:

Որոշման 4-րդ կետի համաձայն՝

4. Սույն որոշման 1-ին հավելվածի 1-ին կետի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերով, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 16-րդ, 20-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 26-րդ, 27-րդ և 28-րդ կետերով, 2-րդ հավելվածի 4-րդ կետով սահմանված կարգավորումներն իրացնել համապատասխան ծրագրային լուծումների հետ միաժամանակ:

Որոշման Հավելված 1-ի 19-րդ կետի համաձայն՝

19. Այն դեպքում, երբ առաջանում է դատարանում գործի բաշխման անհնարինություն, ապա դատարանի (պալատի) նախագահն Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով բաշխումն իրականացնելուց հետո նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով այդ մասին անհապաղ տեղեկացնում է Խորհրդին:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն՝

1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Այսպես, Դիմողը վիճարկում է Օրենսգրքի և Որոշման դրույթները անձի՝ արդար դատաքննության իրավունքի, համաչափության և իրավական որոշակիության սկզբունքների տեսանկյունից, ուստի, նախ անդրադառնանք դրանց վերաբերյալ Սահմանադրական դատարանի՝ համապատասխան դիրքորոշումներին:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշման մեջ նշել է «6. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մաս): Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոտնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսինքն՝ անձը, դիմելով դատարան, պետք է լիարժեք դատական պաշտպանության իրավունք ունենա, ապահովված լինի արդար դատաքննություն իրականացնելու պետության պարտավորությամբ, իր իրավունքների լիարժեք պաշտպանության լեզիտիմ ակնկալիքով:

Անդրադառնալով համաչափության սկզբունքին՝ 2007 թվականի փետրվարի 7-ի ՍԴՈ-677 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «...Սահմանադրության 43 հոդվածի 1-ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը

կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար»:

2001 թվականի հունվարի 11-ի ՄԴՈ-278 որոշման մեջ արձանագրվել է հետևյալ դիրքորոշումը. «6. .... Տվյալ դեպքում, նման սահմանափակում նախատեսող օրենքներում պետք է հաշվի առնվեն հետևյալ հանգամանքները. ա) հարաբերությունների սահմանման և կարգավորման առումով օրենքը պետք է լինի առավելապես ընդհանուր և վերացական, քան կոնկրետ հասցեագրված, բ) նախատեսվող սահմանափակումները պետք է լինեն համաչափ և բխեն ինչպես միջազգային իրավունքի, այնպես էլ ազգային օրենսդրության ժողովրդավարական սկզբունքների էությունից, գ) սահմանափակումները չպետք է լինեն այնպիսին, որոնք վտանգեն մարդու իրավունքների հիմնական բովանդակությունը»:

Անդրադառնալով նաև իրավունքների սահմանափակման համաչափությանը՝ 2015 թվականի դեկտեմբերի 8-ի ՄԴՈ-1244 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշում է. «... Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքով պետք է նախատեսվեն այնպիսի իրավակարգավորումներ, որպիսիք արգելք չհանդիսանան (կամ՝ չսահմանափակեն) սահմանադրական իրավունքների ազատ իրացմանը, եթե այդպիսի իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում և համաչափ չէ իրավաչափ նպատակին»:

2019 թվականի ապրիլի 2-ի ՄԴՈ-1452 որոշում. «Իրավական որոշակիության սկզբունքն ընկած է Սահմանադրության անփոփոխելի 1-ին հոդվածի հիմքում, որով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, **իրավական պետություն է:**

Իրավական պետությունը ենթադրում է իրավական օրենքի առկայություն, որը պետք է լինի հնարավորինս հստակ ու որոշակի և հնարավորություն տա դրա հասցեատերերին ձևավորելու և դրսևորելու համապատասխան վարքագիծ: Վերոնշյալ դիրքորոշումը հաստատվում է Սահմանադրական դատարանի 08.04.2008թ. ՄԴՈ-753 որոշմամբ, որում, մասնավորապես, նշվում է. «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը»:

Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ Սահմանադրական դատարանն իր մեկ այլ՝ ՄԴՈ-1176 որոշմամբ կարևորել է նաև օրենսդրության մեջ կիրառվող հասկացությունների հստակությունը, նշելով, որ «...իրավական

որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության»:

Այսպես, ներկայումս դատավորների միջև գործերի բաշխումն իրականացվում է ոչ թե Օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված Համակարգչային ծրագրի միջոցով, այլ դատարանների նախագահների կողմից՝ «ձեռքով» մակագրությամբ: ԲԴԽ-ի կողմից տրված մեկնաբանության համաձայն՝ նշված հանգամանքը պայմանավորված է քրեական գործի շրջանակներում Համակարգչային ծրագրի սերվերի մուտքի և կառավարման բանալիների առգրավմամբ, և այդ փաստով առաջացել է **անհաղթահարելի ուժ**:

*Օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորների միջև գործերի բաշխումը, վերաբաշխումը և կոլեգիալ դատական կազմերի ձևավորումը կատարվում են հատուկ համակարգչային ծրագրի միջոցով (այսուհետ՝ Համակարգչային ծրագիր), որի շահագործման կարգը սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը:*

Իր հերթին Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *եթե անհաղթահարելի ուժի հետևանքով գործերի բաշխումը հնարավոր չէ իրականացնել Համակարգչային ծրագրի միջոցով, ապա գործերը՝ ըստ դատավորների ազգանունների այբբենական հերթականության, հաշվի առնելով սույն օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված առանձնահատկությունները, դատավորների միջև հավասարաչափ բաշխում է դատարանի նախագահը:*

Օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

*4. Եթե առաջին ատյանի դատարանն ունի նստավայր, որում գործում է նույն մասնագիտացումն ունեցող առնվազն երկու դատավոր, ապա գործերի բաշխումն իրականացվում է ընդհանուր կարգով՝ հիմք ընդունելով նստավայրի սպասարկման տարածքը:*

*5. Եթե առաջին ատյանի դատարանի նստավայրում առկա է համապատասխան մասնագիտացման միայն մեկ դատավոր, ապա սույն հոդվածով նախատեսված գործերի բաշխման կարգը տվյալ նստավայրում չի կիրառվում, իսկ գործը հանձնվում է այդ դատավորին:*

Այսինքն՝ Օրենսգրքը դատավորների միջև գործերի բաշխման մեկ եղանակ է նախատեսում՝ Համակարգչային ծրագրի միջոցով գործերի բաշխումը: Եվ այդ մեկ եղանակից միայն մեկ բացառություն է նախատեսում՝ անհաղթահարելի ուժը:

Մակայն, Օրենսգրքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ տվյալ իրավական ակտում «անհաղթահարելի ուժ» եզրույթի բացատրությունը բացակայում է:

Անհաղթահարելի ուժ եզրույթը ենթադրում է մարդու կամքից անկախ վրա հասած արտակարգ իրադարձություն կամ աղետ, որը չէր կարող կանխատեսվել, կանխարգելվել կամ վերացվել (օրինակ՝ պատերազմ, երկրաշարժ, արտակարգ կամ ռազմական դրություն, ջրհեղեղ և այլն):

Տվյալ դեպքում, ԲԴԽ-ն քրեական գործի շրջանակներում Համակարգչային ծրագրի սերվերի մուտքի և կառավարման բանալիների առգրավումը դիտարկել է որպես անհաղթահարելի ուժ: Սակայն, կարծում ենք, որ Օրենսդիրը, Օրենսգրքում, որպես Համակարգչային ծրագրով մակագրության միակ բացառություն, անհաղթահարելի ուժը նախատեսելիս, նման ցածր շեմ, ինչպիսին քրեական գործով առգրավումն է, ի նկատի չի ունեցել: Եվ այս ամենն էլ այն պարագայում, որ դատարանների նախագահների կողմից գործերի «ձեռքով» մակագրության հստակ չափանիշներ և ընթացակարգեր գոյություն չունեն:

Մասնավորապես, Օրենսգրքի 41-րդ հոդվածը նախատեսում է, որ անհաղթահարելի ուժի դեպքում գործերը դատարանների նախագահների կողմից բաշխվելու են ըստ դատավորների ազգանունների այբբենական հերթականության՝ հաշվի առնելով Օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված առանձնահատկությունները: Իր հերթին որոշման Հավելված 1-ի 19-րդ կետը նախատեսում է, որ այն դեպքում, երբ առաջանում է դատարանում գործի բաշխման անհնարինություն, ապա դատարանի (պալատի) նախագահն Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով բաշխումն իրականացնելուց հետո նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով այդ մասին անհապաղ տեղեկացնում է Խորհրդին: Ստացվում է, որ Որոշումն էլ գործերի լիցենզավորման մակագրության հստակ չափանիշներ և կարգ չի նախատեսում և միայն հղում է կատարում Օրենսգրքի 41-րդ հոդվածին:

Որպեսզի առավել պարզ լինի գործերի բաշխման էլեկտրոնային և «ձեռքով» մակագրության տարբերությունը, ներկայացնենք, թե Որոշման Հավելվածի 1-ի 1-ին կետով ինչպիսի չափանիշներ են գործում Համակարգչային ծրագրով գործերի բաշխման ժամանակ:

Այսպես, Որոշման Հավելված 1-ի 1-ին կետի համաձայն՝

1. Հայաստանի Հանրապետության դատարաններում ստացված գործերը դատավորների միջև բաշխելիս Դատական ավտոմատացված համակարգը՝ Դատական համակարգ համակարգչային ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) հիմք է ընդունում գործերի հավասարաչափ բաշխման հետևյալ չափանիշները՝

1) գործերի բաշխման պատահականությունը՝ Ծրագրում ապահովվելով դատավորների միջև գործերը բաշխելիս պատահական ընտրությունը՝ առանց գործերի մուտքագրման հաջորդականությունը հաշվի առնելու,

2) գործերի բաշխման հավասարությունը՝ Ծրագրում ապահովվելով դատավորների միջև գործերի բաշխման տվյալ օրվան նախորդող 365-օրյա ժամանակահատվածը՝ համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորներից յուրաքանչյուրին բաշխված (հանձնված) գործերի միջին քանակի համահարթեցմանը համապատասխան,

3) դատավորների մասնագիտացումը՝ Ծրագրում ապահովվելով դատավորների միջև գործերի բաշխումը դատավորի հիմնական, իսկ առկայության դեպքում՝ նաև առանձին տեսակի գործեր քննելու մասնագիտացումը հաշվի առնելով,



4) առանձին տեսակի գործերի բաշխման համար օրենքով նախատեսված առանձնահատկությունները հաշվի առնելը՝ օրենքով սահմանված դեպքերում Շրագրում առանձին տեսակի գործերի բաշխումն իրականացնելով անհապաղ,

5) գործերի բարդությունը՝ Շրագրում ապահովելով դատավորների միջև գործերի բաշխումը՝ առանձին տեսակի գործերի բարդության աստիճանից ելնելով, ընդ որում՝ բարդության աստիճանը սահմանվում է Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ:

6) մատչելիությունը՝ Շրագրում ապահովելով դատավորների միջև գործերը բաշխելիս դատարանի ծառայություններից օգտվողների համար առավել մատչելի արդարադատության ապահովման նպատակով նստավայրերի սպասարկման տարածքի շրջանակներում նաև դատարանի նստավայրերի միջև հեռավորությունները հնարավորինս հաշվի առնելը,

7) գաղտնիությունը՝ Շրագրում ապահովելով դատավորների միջև գործեր բաշխելիս, վերաբաշխելիս օրենքով պահպանվող, այդ թվում՝ պետական գաղտնիք պարունակող տվյալների գաղտնիությունը:

Վերոգրյալից, ինչպես նաև՝ դատավորների և դատարանների նախագահների, փաստաբանների կողմից ՄԻՊ-ին ուղղված գրություններից և պարզաբանումներից պարզ է դառնում, որ «ձեռքով» մակագրության ժամանակ վերը նշված չափանիշներն ապահովելը գործնականում անհնար է: Նույնիսկ դատավորների անունների այբբենական կարգով բաշխումը գործնականում խնդիրներ է առաջացնում, քանի որ, օրինակ՝ պարզ չէ, թե դատարանի նախագահն երբ կիրականացնի գործերի բաշխումը, կամ հնարավոր է, որ կոնկրետ գործ մի կողմ դնի, մինչև «ցանկալի» դատավորի հերթը հասնի, քանի որ չկա նաև հստակ կազավորում, թե երբ պետք է մակագրվի դատարան մուտքագրված առաքանին: Իսկ Որոշման Հավելված 1-ի 2-րդ կետը հստակ կարգավորում է այդ հարցը էլեկտրոնային մակագրության ժամանակ և նախատեսում, որ Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարաններում քրեական, քաղաքացիական, վարչական և սնանկության գործերը, մինչդաստական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ներկայացված միջնորդությունները՝ բացառությամբ սույն որոշմամբ սահմանված դեպքերի, պատժի կատարման հետ կապված, հարկադիր բուժման տեսակի փոփոխության վերաբերյալ միջնորդությունները, դատական հանձնարարությունները, հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումներն **անհապաղ մուտք են արվում Շրագիր և նույն օրը՝ ժամը 20:00-ին**, հավասարաչափ բաշխման չափանիշներին համապատասխան բաշխվում են տվյալ դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորների միջև՝ հաշվի չառնելով գործերի մուտքագրման հերթականությունը՝ ըստ Բարձրագույն դատական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) որոշմամբ սահմանված դատավորների մասնագիտացումների:

Խնդիրը բարձրաձայնվել է նաև փաստաբանների կողմից: Մասնավորապես, մեջբերենք Արա Զոհրաբյանի՝ ֆեյսբուկ սոցիալական ցանցում 08.10.2021 թվականի կատարած գրառումը (հղումը՝

9).

«Ինչպես արդեն գիտեք, քրեական գործով դատարաններում գործերի բաշխման համակարգչային ծրագիրն առգրավելու պատճառով, որոշ դատարաններում, այդ թվում՝ ՀՀ վարչական դատարանում, գործերի բաշխումը կատարում է տվյալ դատարանի նախագահը:

Առողջապահության նախարարի հայտնի նորմատիվ հրամանի դեմ վարչական դատարանին դիմում ենք ներկայացրել, խնդրելով նաև կիրառել դիմումի ապահովման միջոց, այն է՝ կասեցնել հրամանի գործողությունը մինչև դատաքննության ավարտը:

Ըստ datalex.am տեղեկությունների, մեր դիմումը մակագրվել է հետևյալ դատավորներին՝

1. Մելքումյան Միքայել Գագիկի (նախագահող)
2. Դանիելյան Դանիել Սամվելի
3. Զարիկյան Կարեն Բարսեղի
4. Խանդանյան Ռաֆիկ Գագիկի
5. Ներսիսյան Արմեն Գոգոլի

Օրենսդիրն այս իրավիճակում չի թողել դատարանի նախագահի քմահաճույքին, և խաղի կանոն է սահմանել: ՀՀ դատական օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Եթե անհաղթահարելի ուժի հետևանքով գործերի բաշխումը հնարավոր չէ իրականացնել Համակարգչային ծրագրի միջոցով, ապա գործերը՝ ըստ դատավորների ազգանունների այբբենական հերթականության ... դատավորների միջև հավասարաչափ բաշխում է դատարանի նախագահը:

Ներկայացնում եմ Վարչական դատարանի Երևանի նստավայրի դատավորների ցանկը ըստ ազգանունների այբբենական հերթականության՝

1. Ազրոյան Ռուզաննա Արայիկի
2. Այվազյան Հրաչ Մարտունի
3. Առաքելյան Գրիգոր Սամվելի
4. Ավազյան Արթուր Ռաֆայելի
5. Դանիելյան Դանիել Սամվելի
6. Դարբինյան Աղասի Սամվելի
7. Զարիկյան Կարեն Բարսեղի
8. Խանդանյան Ռաֆիկ Գագիկի
9. Ծատուրյան Արթուր Արշավիրի
10. Համբարձումյան Մերի Գևորգի
11. Հարությունյան Ալեքսանդրա Ալեքսելի
12. Հարությունյան Անի Գրիգորի
13. Հովակիմյան Սամվել Մերյոժայի
14. Ղազարյան Արգիշտի Անդրանիկի
15. Մելքումյան Միքայել Գագիկի

16. Միրզոյան Արծրուն Մարտունի

17. Պետրոսյան Մհեր Ղարիբի

18. Սոսյան Գևորգ Միքայելի

Դատական օրենսգրքի վերոնշված կանոնից պարզ է դառնում, որ վարչական դատարանի նախագահը, եթե Մելքումյան Միքայելից է սկսել (ցանկի 15-րդը), ապա պետք է ներգրավեր հետևյալ հաջորդ չորս դատավորներին՝ Միրզոյան Արծրունին (16), Պետրոսյան Մհերին (17), Սոսյան Գևորգին (18) և Ազրոյան Ռուզաննային (1-ին, քանի որ ցուցակը 18-ով ավարտվում է և սկսվում է 1-ից):

Այս պահին չգիտենք Մելքումյան Միքայելին գործ մակագրելը համապատասխանում է ՀՀ դատական օրենսգրքի 41-րդ հոդվածի պահանջին, քանի որ չունենք բավարար չափով տեղեկություն, թե արդյոք մակագրման իր հերթն էր հասել, սակայն մյուս դատավորների մասով, մեր կարծիքով, խախտվել է այդ պարզ դատավարական կանոնը: Թե ինչու է խախտվել, արդեն մտահոգություններ են առաջացնում և կասկածներ:

Այս հիմքով բացարկ է հայտնվել դատարանի ողջ կազմին:»:

Նշված գրառման մեկնաբանություններում խնդրին անդրադարձ է կատարել փաստաբան Հարութ Ակլունցը.

«Նշված հայցով գործի համարը ՎԴ/10635/05/21 է:

Թիվ ՎԴ/10625/05/21 - դատավոր Մելքումյան

Թիվ ՎԴ/10626/05/21 - դատավոր Ներսիսյան

Թիվ ՎԴ/10627/05/21 - դատավոր Պետրոսյան

Թիվ ՎԴ/10628/05/21 - Սոսյան

Թիվ ՎԴ/10629/05/21 - Այվազյան

Թիվ ՎԴ/10630/05/21 - Ազրոյան

Թիվ ՎԴ/10631/05/21 - Առաքելյան

Թիվ ՎԴ/10632/05/21 – Ավագյան

Ինչպես տեսնում ենք մինչև այդ հայցը ներկայացնելը ամեն ինչ լավ էր (չհաշված, որ այբբենական կարգով դասավորելիս Ազրոյանն ավել առաջ է քան Այվազյանը): Շարունակենք.

Թիվ ՎԴ/10633/05/21 - Հովակիմյան Սամվել

Թիվ ՎԴ/10634/05/21 - Ղազարյան Արգիշտի

Թիվ ՎԴ/10635/05/21 - Մելքումյան, Դանիելյան, Ջարիկյան, Խանդանյան,

Ներսիսյան

Թիվ ՎԴ/10636/05/21 - Պետրոսյան

Թիվ ՎԴ/10637/05/21 - Սոսյան

Թիվ ՎԴ/10638/05/21 - Մելքումյան, Դանիելյան, Ջարիկյան, Խանդանյան,

Ներսիսյան

Թիվ ՎԴ/10639/05/21 - Ազրոյան

Թիվ ՎԴ/10640/05/21 - Առաքելյան

Թիվ ՎԴ/10641/05/21 - Մելքումյան, Դանիելյան, Ջարիկյան, Խանդանյան,

Ներսիսյան

Թիվ ՎԴ/10642/05/21 - Ավագյան

Թիվ ՎԴ/10643/05/21 - Հարությունյան

Թիվ ՎԴ/10644/05/21 - Հովակիմյան

Հարկ է նկատել, որ թիվ ՎԴ/10635/05/21, թիվ ՎԴ/10638/05/21, թիվ ՎԴ/10641/05/21 գործերը վերաբերում են Առողջապահության նախարարի հրամանին, և ակնհայտ է, որ միայն այդ գործերի դեպքում է այբբենական կարգով մակագրման օրինաչափությունը խախտվում:»:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահի կողմից դատավորների միջև դատական գործերի բաշխման օրենքով սահմանված կարգի խախտման հաստատված դեպքի վերաբերյալ հայտարարություն է տարածել նաև Liberty LLC-Law Firm փաստաբանական ընկերությունը (հղումը՝ <https://www.facebook.com/854761161213721/posts/4861688300520967/>), համաձայն որի՝ «...Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մնացական Մարտիրոսյանի վարույթում է գտնվում թիվ ԵԴ/1077/01/21 քրեական գործն ըստ մեղադրանքի Գևորգ Նավոյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

Նշված քրեական գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահի կողմից մակագրվել է դատավոր Մնացական Մարտիրոսյանին «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» ՀՀ սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ դատավորների միջև ըստ ազգանունների այբբենական հերթականության գործերի հավասարաչափ բաշխման պահանջի խախտմամբ:

Այսպես, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» ՀՀ սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորների միջև գործերի բաշխումը, վերաբաշխումը և կոլեգիալ դատական կազմերի ձևավորումը կատարվում են հատուկ համակարգչային ծրագրի միջոցով (այսուհետ՝ Համակարգչային ծրագիր), որի շահագործման կարգը սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե անհաղթահարելի ուժի հետևանքով գործերի բաշխումը հնարավոր չէ իրականացնել Համակարգչային ծրագրի միջոցով, ապա գործերը՝ ըստ դատավորների ազգանունների այբբենական հերթականության, հաշվի առնելով սույն օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված առանձնահատկությունները, դատավորների միջև հավասարաչափ բաշխում է դատարանի նախագահը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» ՀՀ սահմանադրական օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը չեն կիրառվում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում գործերի բաշխման կարգի նկատմամբ:

Վերը նշված իրավանորմերի համակարգչային վերլուծությունից հետևում է, որ դատավորների միջև գործերի բաշխումը, որպես կանոն, տեղի է ունենում հատուկ

համակարգչային ծրագրի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ գործերը դատավորների միջև հավասարաչափ բաշխում է դատարանի նախագահը՝ ըստ դատավորների ազգանունների այբբենական հերթականության:

Հանրահայտ փաստ է, որ վերջին ժամանակներում, համակարգչային ծրագրով գործերը բաշխելու անհնարինության պատճառաբանությամբ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում դատական գործերի բաշխումն իրականացվում է դատարանի նախագահի կողմից՝ վերը նշված օրենքով սահմանված եղանակով:

«Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ քրեական գործերի՝ ըստ դատավորների ազգանունների այբբենական հերթականության բաշխման հերթական շրջապտույտը ավարտվել է թիվ ԵԴ/1074/01/21 քրեական գործը դատավոր Կ. Ֆարխոյանին բաշխելով՝ հաշվի առնելով, որ դատավոր Ֆարխոյանի ազգանունը սկսվում է այբուբենի վերջին տառով: Այնուհետև հաջորդ դատական գործերը՝ ԵԴ/1075/01/21 և ԵԴ/1076/01/21, կրկին ըստ ազգանունների այբբենական հերթականության բաշխվել են համապատասխանաբար Վ. Գրիգորյանի և Ա. Դանիբեկյանի միջև: Ըստ գործերի համարակալման հերթականության հաջորդ դատական գործը՝ սույն հայտարարությունում հիշատակված քրեական գործը (ԵԴ/1077/01/21), մակագրվել է դատավոր Մ. Մարտիրոսյանին, մինչդեռ նշված գործին հաջորդող դատական գործը՝ ԵԴ/1078/01/21, մակագրվել է դատավոր Ա. Հովհաննիսյանին: Հաջորդիվ բոլոր գործերն, ըստ հերթական համարակալման և ըստ դատավորների ազգանունների այբբենական հերթականության, բաշխվել են դատավորներ Հ. Մանուկյանի, Լ. Մելիքյանի, Մ. Մելքոնյանի, Վ. Միսակյանի, Մ. Շահվերդյանի և Կ. Ֆարխոյանի միջև, որով էլ ավարտվել է հերթական շրջապտույտը:

Վերոգրյալից հետևում է, որ սույն հայտարարության մեջ նշված գործի բաշխումը տեղի է ունեցել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի խախտմամբ, քանի որ այն չի բաշխվել ըստ դատավորների ազգանունների այբբենական հերթականության: Սույն հայտարարությունում նշված քրեական գործը պետք է մակագրվեր դատավոր Ա. Հովհաննիսյանին, այլ ոչ թե Մ. Մարտիրոսյանին, ընդ որում՝ դատավոր Ա. Հովհաննիսյանը գտնվել է աշխատանքային լիազորությունների կատարման մեջ (չի եղել արձակուրդում, այլ դատարան գործուղման մեջ և այլն) և վերջինիս մակագրվել է թիվ ԵԴ/1078/01/21 քրեական գործը, որն Առաջին ատյանի դատարանում ստացվել է 10.08.2021 թվականին, ինչպես և թիվ ԵԴ/1077/01/21 քրեական գործը: Ավելին, եթե նույնիսկ ինչ-ինչ պատճառներով նշված քրեական գործը չմակագրվեր դատավոր Ա. Հովհաննիսյանին, ապա այն պետք է մակագրվեր դատավոր Հ. Մանուկյանին, ով ևս ըստ իր ազգանվան այբբենական հերթականության առաջ է եղել դատավոր Մ. Մարտիրոսյանից, և ում նույնպես նույն օրը՝ 10.08.2021թ., մակագրվել է քրեական գործ:

Վերը նշված իրավիճակը պարզաբանելու նպատակով փաստաբանական հարցում ենք ուղղել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահին, ինչին ի պատասխան ստացել ենք նույն դատարանի աշխատակազմի

ղեկավարի պաշտոնակատարի 2021 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ ԴԴ-9.1 Ե-192769 գրությունը, որով վերջինս հայտնել է, որ թիվ ԵԴ/1077/01/21 քրեական գործի բաշխման այբբենական կարգը խախտվել է դատարանի գրասենյակի աշխատանքային գերձանրաբեռնվածությամբ պայմանավորված տեխնիկական վրիպակի արդյունքում՝ նկատի ունենալով, որ օրեկան միջինը կատարվում է 500-600 դատական գործերի բաշխում:

Վերոգրյալի հետ կապված նախ ցանկանում ենք հայտնել, որ Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատարի ներկայացրած պարզաբանումը դատական գործերի բաշխման կարգի խախտումը տեխնիկական վրիպակի պատճառով լինելու մասով անարժանահավատ է՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Առաջին, հատկանշական է այն փաստը, որ վերևում նշված գործերի «բաշխման շրջապատույտը» ավարտվել է առանց դատավոր Մ. Մարտիրոսյանին այլ գործ մակագրվելու: Մրանից ակնհայտ է դառնում, որ դատավոր Մ. Մարտիրոսյանի՝ այսպես կոչված դատական գործ ստանալու հերթն առաջ է բերվել՝ Գ. Նավոյանի գործը նրան մակագրելու նպատակով, հակառակ պարագայում, եթե դիտարկենք դատարանի աշխատակազմի ղեկավարի պարտականությունները կատարողի կողմից նշված վրիպակ լինելու պատճառի տարբերակը, ապա դատավոր Մնացական Մարտիրոսյանին դատական գործերի բաշխման նույն շրջապատույտում պետք է մակագրվեր երկու դատական գործ՝ մեկը վրիպակի արդյունքում, մյուսը՝ իր հերթին:

Երկրորդ, նշված քրեական գործով տեղի ունեցած դատական գործընթացները ևս հիմք են տալիս գալ այն եզրահանգման, որ դատական գործերի բաշխման կարգը խախտվել է դիտավորությամբ: Մասնավորապես, նշված քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իրականացման շրջանակներում դատավոր Մնացական Մարտիրոսյանն ակտիվ դերակատարություն է ունեցել և իր որոշումներով բազմիցս սահմանափակել է Գևորգ Նավոյանի հիմնական իրավունքները և ազատությունները՝ անձնական ազատության, բնակարանի անձեռնմխելիության և հեռախոսային խոսակցությունների գաղտնիության:»:

Վերոգրյալից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ գործերի Համակարգչային ծրագրով մակագրությունը որևէ կերպ չի կարող փոխարինվել «ձեռքով» մակագրությամբ՝ համապատասխան չափանիշների և ընթացակարգերի բացառության պատճառով:

Այսինքն՝ Օրենսդիրը, նախատեսելով դատավորների միջև գործերի բաշխման էլեկտրոնային եղանակ, որպես գործերի բաշխման միակ տարբերակ, նպատակ է ունեցել չեզոքացնելու դատավորների գործունեությանը ցանկացած արտաքին միջամտություն, ինչը չի կարելի ասել «ձեռքով» մակագրության ընթացակարգի մասին, որի արդյունքում դատավորները, փաստորեն, կախման մեջ են դրվում դատարանի նախագահից, որը սեփական հայեցողությամբ (թեկուզ և այբբենական կարգը պահպանելով) ինքն է որոշում, թե որ դատավորին ինչ գործ մակագրի: Արդյունքում խաթարվում է դատավորների՝ Սահմանադրության 63-րդ հոդվածով երաշխավորված անկախության սկզբունքը:

Դատավորների անկախության սկզբունքն իր արտացոլումն է գտել նաև Օրենսգրքի 7-րդ հոդվածում, որի 1-ին մասի համաձայն՝ արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելիս դատավորն անկախ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, պաշտոնատար, ֆիզիկական և իրավաբանական անձանցից և հաշվետու չէ որևէ մեկի, այդ թվում՝ պարտավոր չէ որևէ բացատրություն տալ:

Ավելին, նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վտանգել կամ վնասել դատարանի կամ դատավորի անկախությունը:

Տվյալ դեպքում, բոլոր հիմքերն ունենք եզրակացնելու, որ քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից տեղի է ունեցել դատավորի անկախությանը միջամտություն, որն անթույլատրելի է թե՛ Սահմանադրության, թե՛ Օրենսգրքի տեսանկյունից: Նման միջամտությունը ազդել է ամբողջ հանրապետության արդարադատության համակարգի վրա՝ իր հերթին հանգեցնելով նաև դատարանների նկատմամբ վստահության անկման (առանձին դեպքերում նաև՝ կորստի):

Դատարանների անկախության սկզբունքը երաշխավորված է նաև բազմաթիվ միջազգային իրավական ակտերով:

Մասնավորապես, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանք քննելու կամ որևէ քաղաքացիական դատավարությունում իր իրավունքներն ու պարտականությունները որոշելու ընթացքում ունի օրենքի հիման վրա ստեղծված իրավասու, *անկախ* ու անկողմնակալ դատարանի կողմից գործի արդարացի ու հրապարակավ քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված *անկախ* ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Վերոգրյալի վերլուծությունից պարզ է դառնում, որ անձի՝ արդար դատաքննության իրավունքի երաշխավորման կարևորագույն պայման է համարվում դատարանի անկախությունը (անկախության երաշխիքը): Դատարանի անկախության երաշխիքը ենթադրում է դատական իշխանությունը այլ մարմիններից:

Դատարանների անկախությանը և դատավորների միջև գործերի բաշխմանն անդրադարձել է նաև եվրոպական դատարանը: Վերջինս նշել է, որ դատավորների անկախության համար պահանջվում է, որ առանձին դատավորներն անկախ լինեն ինչպես արտաքին, այնպես էլ դատական համակարգի ներսից բխող անհարկի ազդեցությունից: Դատական համակարգի ներսում անկախության համար պահանջվում

է, որ դատավորներն ազատ լինեն գործընկեր դատավորների կամ դատարանում վարչական գործառույթներ իրականացնող անձանց, օրինակ՝ դատարանի նախագահի կամ դատարանի ստորաբաժանման նախագահի հրահանգներից կամ ճնշումից: Դատական համակարգի ներսում դատավորների անկախությունը և, մասնավորապես, դատական համակարգում իրենց վերադասներից անկախությունն ապահովող բավարար երաշխիքների բացակայությունը բավարար է տվյալ դատարանի անկախության և անաչառության վերաբերյալ կասկածները ողջամիտ և օբյեկտիվորեն հիմնավորված համարելու համար (Ազգրոկոմպլեկսն ընդդեմ Ուկրաինայի գործով 08.03.2012 թվականի վճիռ, գանգատ՝ թիվ 23465/03, կետ 137):

Այսինքն՝ եվրոպական դատարանի դիրքորոշումից կարելի է եզրակացնել, որ դատարանի նախագահը պետք է իրականացնի միայն վարչական (կառավարչական և կազմակերպչական) գործառույթներ, որոնք հստակ առանձնացված պետք է լինեն դատական գործառույթներից և դատավորներին կախվածության մեջ չդնեն դատարանի նախագահից:

Դատարանների նախագահների նման լիազորությունը կրում է հայեցողականության տարրեր, որը կարող է գործադրվել դատավորների նկատմամբ ճնշում գործադրելու նպատակով՝ ծանրաբեռնելով վերջիններիս կամ վերջիններիս հանձնելով միայն ցածրակարգ գործեր: Նույնիսկ հնարավոր են դեպքեր, երբ դատարանների նախագահները քաղաքական զգայունություն ունեցող գործերը հանձնարարեն կոնկրետ դատավորների և խուսափեն դրանք այլ դատավորների մակագրելուց: Սա կարող է շատ արդյունավետ միջոց լինել գործի էլքի վրա ազդեցություն ունենալու համար (արդյունքում հանգեցնելով անձի՝ արդար դատաքննության իրավունքի ոտնահարման):

Վերոգրյալից ելնելով՝ եզրահանգում ենք, որ գործող իրավակարգավորումների պայմաններում դատարանների նախագահների կողմից «ձեռքով» մակագրություններ իրականացնելու հստակ չափանիշների բացակայության հանգամանքը հանգեցնում է դատարանների նախագահների կողմից հայեցողականության դրսևորման, որն իր հերթին հանգեցնում է դատարանի՝ սահմանադրորեն և միջազգայնորեն երաշխավորված անկախության խոչընդոտման, որն էլ իր հերթին հանգեցնում է անձի՝ արդար դատաքննության իրավունքի ոտնահարման (քանի որ հանդիսանում է արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր): Դատարանի անկախությունը բավարար չափով երաշխավորված կլինի միայն գործերի բաշխման հստակ և օբյեկտիվ չափանիշներին համապատասխան օրենսդրական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու դեպքում:

Դատարանների անկախության սկզբունքին անդրադարձել է նաև Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով: 2006 թվականի սեպտեմբերի 20-ի ՍԴՈ-647 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշում է. «11. Սույն որոշման 8-րդ կետում հստակեցված վեճի առարկայի տեսանկյունից անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ՀՀ Սահմանադրության 94 հոդվածի 1-ին մասի իրավական բովանդակությանը: Այդ դրույթը սահմանում է. «Դատարանների



անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով»: Վերջինս ենթադրում է, որ Սահմանադրությամբ և օրենքներով անհրաժեշտ սահմանադրաիրավական երաշխիքներ պետք է ստեղծվեն դատարանների անկախության ապահովման համար: Իր հերթին, դատարանների անկախությունը վերացական հասկացություն չէ: Այն ենթադրում է գործառնական, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախության այնպիսի նախադրյալներ, որոնք անհրաժեշտ ու բավարար են դատարանների ու ողջ դատական իշխանության անկախությունը երաշխավորելու համար:

ՀՀ Սահմանադրության 5, 91, 94, 97 հոդվածների դրույթները հիմնարար սահմանադրական սկզբունքներ են, որոնք ամրագրում են դատարանների՝ որպես միասնական պետական իշխանության ինքնուրույն թևի՝ դատական իշխանության, և դատավորների՝ որպես դատական իշխանության միակ կրողների, սահմանադրական կարգավիճակը՝ սահմանադրորեն երաշխավորելով նրանց անկախությունը: Օրենքները կոչված են իրավական լրացուցիչ երաշխիքներ ստեղծելու այդ անկախության ամրապնդման համար:

2002թ. սեպտեմբերի 26-ին անդրադառնալով Հայաստանի կողմից ստանձնված պարտավորությունների կատարմանը՝ Վեհաժողովը, ի թիվս այլ հարցերի, հատուկ կարևորեց դատաիրավական բարեփոխումներին հետամուտ լինելու անհրաժեշտությունը, մասնավորապես շեշտելով՝ «...երաշխավորել դատավորների լիակատար անկախությունը՝ Եվրոպայի խորհրդի չափանիշների համաձայն»:

Եվ վերջում, հարկ ենք համարում անդրադառնալ նաև քրեական գործի շրջանակներում Համկարգչային ծրագրի սերվերի մուտքի և կառավարման բանալիների առգրավման իրավաչափությանը՝ Սահմանադրության 78-րդ հոդվածով երաշխավորված համաչափության տեսանկյունից:

Այսպես, քրեական գործի շրջանակներում առգրավվել են Համկարգչային ծրագրի սերվերի մուտքի և կառավարման բանալիները: Նշվածի արդյունքում դատական համակարգում գործերը սկսել են դատավորների միջև բաշխվել դատարանների նախագահների կողմից (նշված գործառույթի իրավաչափությանն արդեն անդրադարձել ենք վերևում): Առգրավման արդյունքում ամբողջ հանրապետությունում խաթարվել է արդարադատության համակարգը, որը, ինչպես վերևում արդեն նշեցինք, հանգեցրել է դատավորի անկախության և անձի՝ արդար դատաքննության իրավունքների սահմանափակման (առանձին դեպքում նաև՝ խոչընդոտման): Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը: Իր հերթին Սահմանադրության 76-րդ հոդվածը նախատեսում է մարդու և քաղաքացու իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակման դեպքերը, համաձայն որի՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և

ազատությունները, բացառությամբ Սահմանադրության 23-26-րդ, 28-30-րդ, 35-37-րդ հոդվածներում, 38-րդ հոդվածի 1-ին մասում, 41-րդ հոդվածի 1-ին մասում, 47-րդ հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի 1-ին նախադասությունում և 8-րդ մասում, 52-րդ, 55-րդ հոդվածի 2-րդ մասում, 56-րդ, 61-րդ, 63-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում: Նշված հոդվածը անձի՝ արդար դատաքննության իրավունքի կասեցում կամ սահմանափակում չի նախատեսում, այսինքն՝ **նշված իրավունքը սահմանափակման ենթակա չէ:**


Ստացվում է, որ տվյալ պարագայում, կշեռքի մի նժարին դրված է քրեական գործով հանցագործության դեմ պայքարը, մյուս նժարին՝ անձի՝ արդար դատաքննության իրավունքը (որը սահմանափակման ենթակա չէ) և դատարանի անկախությունը (ցանկացած արտաքին և ներքին միջամտությունից): Այսինքն՝ տվյալ պարագայում քրեական գործի ընթացքով պայմանավորված, փաստորեն խաթարվել են սահմանադրորեն երաշխավորված իրավունքներ և սկզբունքներ, որոնք ոչ միայն արդարացում չունեն, այլև համաչափ չեն հետապնդվող նպատակին: Պետությունը իր առջև դրված խնդիրները հանցագործությունների դեմ պայքարի շրջանակներում չպետք է իրականացնի ի հաշիվ սահմանադրորեն երաշխավորված իրավունքների (նշված պարագայում պետությունն իր առջև դրված խնդիրներից մեկին փաստորեն տալիս է առավել կարևորություն կամ նախապատվություն, նույնիսկ եթե նման նպատակ ի սկզբանե չի հետապնդել):

Ամփոփելով վերոգրյալը՝ հանգում ենք այն եզրակացության, որ միջոցը, որը պետությունը նախատեսել է, որպես այլընտրանքային լուծում, բավարար չափով հստակ չէ (օրինակ՝ թե ինչ է իրենց ենթադրում անհաղթահարելի ուժը), չկան գործերի բաշխման հստակ և օբյեկտիվ չափանիշներ, չկան համապատասխան օրենսդրական մեխանիզմներ և կառուցակարգեր, որոնք կապահովեն անձի՝ սահմանադրորեն երաշխավորված արդար դատաքննության և դրա բաղադրատարր հանդիսացող դատարանի անկախության սկզբունքների երաշխավորումը:

Ինչպես շատ պետություններ, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունն, իրեն հռչակելով որպես իրավական պետություն, իր Սահմանադրությունում հստակ սահմանել է հետևյալ դրույթը. «Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:» (3-րդ հոդվածի 1-ին մաս): Սրանից էլ բխում են Սահմանադրության նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով ամրագրված նորմերը. «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:»:

**Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.**

«ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի և Բարձրագույն դատական խորհրդի «Դատավորների միջև գործերի հավասարաչափ բաշխման չափանիշները և կարգը. գործերի վերաբաշխման, կոլեգիալ դատական կազմերը ձևավորելու կարգը և դատավորներին հանձնվող գործերի տոկոսաչափեր սահմանելու մասին» թիվ ԲԴԽ-16-Ն-6 որոշման 4-րդ կետի և դրա Հավելված 1-ի 19-րդ կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին, 78-րդ, 79-րդ և 81-րդ հոդվածներին խնդրահարույց է:

 Recoverable Signature

*Համակարգող՝*

**X** Lyudvik Davtyan

*Լյուդվիկ Դավթյան*

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169